ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ողջույնի խոսքը
«Ինժեներական լուծումները մեքենաշինության մեջ»
առաջին միջազգային գիտաժողովի բացման ժամանակ
(2018 թ. սեպտեմբերի 17, Հայաստանի ամերիկյան համալսարան)

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ, հյուրեր...

Ուրախ եմ ձեզ ողջունել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի և Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից կազմակերպված «Ինժեներական լուծումներ մեքենաշինությունում» թեմայով գիտաժողովի բացման առիթով:

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեն կարևորում է գիտության այս բնագավառը և, պետական բյուջեի շրջանակներում, մշտապես իր աջակցությունն է ցուցաբերում նման միջոցառումների կազմակերպմանը:

Հատկանշական է, որ նման թեմայով միջոցառում է կազմակերպվել, և ողջունելի է, որ կազմակերպողները ՀՀ առաջատար բուհերից են՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը և Հայաստանի ամերիկյան համալսարանը:

Մեր երկիրը տեխնիկական գիտությունների ոլորտում միշտ էլ առաջատար է եղել. հիմնարար և կիրառական ճարտարագիտական հետազոտությունները, դրանց հիման վրա ստեղծվող տեխնոլոգիաները Հայաստանի Հանրապետությունում ունեն ձևավորված ավանդույթներ և կայացած ու միջազգային մակարդակին համապատասխանող գիտական դպրոցներ, որոնք արդարացիորեն համընդհանուր ճանաչում են ստացել աշխարհում և պահպանում են իրենց բարձր վարկանիշը:

Այսօր Հայաստանում խիստ կարևորվում են տեխնիկական գիտությունների ոլորտում իրականացվող աշխատանքները և ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումները: Գիտական կազմակերպություններով և միջազգային ճանաչում ունեցող մասնագետներով հարուստ այս բնագավառը հանդիսանում է Հայաստանի գիտության զարգացող ճյուղերից մեկը:

Պոլիտեխնիկական համալսարանն իր անցած ուղով ուրույն տեղ ունի Հայաստանի արդի գիտական համակարգում: Իրականացվող բազմաբնույթ գիտական և հետազոտական ծրագրերը, անձնակազմի արհեստավարժությունը, գիտնականների աշխատանքի արդյունավետության ցուցանիշները, բարձր վարկանիշ ունեցող

ամսագրերում տպագրված հոդվածների քանակը և որակը, միջազգային ինտեգրման ուղղությամբ տարվող աշխատանքները իրենց անմիջական ազդեցությունն ունեն երկրի գիտական համակարգի ձևավորման գործում:

Համալսարանը գրեթե մշտապես ակտիվորեն մասնակցում է կոմիտեի կողմից կազմակերպվող մրցույթներին և ծրագրերին՝ ինչպես հիմնարար, այնպես էլ՝ կիրառական գիտության բնագավառում: Համալսարանի գիտաշխատողները ներգրավված են պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական թեմաներում և ծրագրերում, համալսարանում հաճախ են կազմակերպվում գիտական միջոցառումներ:

Բավականին զարգացած են համալսարանի կապերը միջազգային գիտական համագործակցության բնագավառում. ինտեգրված է միջազգային գիտական համակարգի մեջ և սերտորեն համագործակցում է մի շարք արտասահմանյան գիտական կենտրոնների և համալսարանների հետ: Այս առումով ողջունելի է համագործակցությունը Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ, քանի որ այն թերևս Հայաստանում միջազգային մակարդակի կրթություն տվող առաջատար բուհն է, որն իր դասավանդման մեթոդներով հնարավորություն է տալիս ուսանողներին ծանոթանալ կրթության արևմտյան մոտեցումներին թե՛ լեզվի, թե՛ աշխատառճի առումով, ինչն առավելություն է ստեղծում աշխատանքում հաջողությունների հասնելու համար:

Ընդհանրապես, նմանատիպ միջոցառումները միտված են միջազգային փոխշահավետ համագործակցությունը խրախուսելուն և մասնագիտական բազմապրոֆիլ հարթակ ստեղծելուն: Դրանք ոլորտի գիտաշխատողներին հնարավորություն են տալիս ներկայացնել իրենց կողմից իրականացվող և կիրառական հետաքրքրություն ներկայացնող հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև՝ իրենց գործունեությանն առնչվող խնդիրները:

Գիտաժողովը կարևորում է նաև նրանով, որ արդյունքում, համոզված ենք, կակտիվանա միջազգային համագործակցությունը, էականորեն կավելանա իրականացվող համատեղ նախագծերի քանակը:

Ամփոփելով խոսքս՝ ուզում եմ նշել, որ ժամանակակից գիտության առջև ծառացած հիմնահարցերի մեծ մասը համընդհանուր մարտահրավերներ են, և դրանց լուծումները նույնպես պահանջում են համընդհանուր պատասխան միջոցառումներ: Համաշխարհային կարևորության շատ գիտական հետազոտություններ հնարավոր է իրականացնել միայն խոշորամասշտաբ համագործակցության շրջանակներում: Եվ նմանատիպ գիտաժողովները խթան են հանդիսանում, որպեսզի զարգանան միջազգային գիտական և

գիտատեխնիկական կապերը, իսկ սահմանափակ ռեսուսներով երկրները կարողանան հաստատվել համաշխարհային գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական տարածքում:

Հարգելի գործընկերներ,

Ավարտելով խոսքս՝ կցանկանայի Գիտության կոմիտեի և անձամբ իմ անունից գիտաժողովի կազմակերպիչներին և մասնակիցներին մաղթել արդյունավետ և հաճելի աշխատանքային օրեր, իսկ համալսարանների անձնակազմերին՝ գիտական անսպառ եռանդ, գործին սեր ու նվիրում:

Հաջողություններ և նորանոր ձեռքբերումներ ձեզ:

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ